

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Խաղաղ պայմաններում հնարավոր տարերային աղետների և տեխնաձին վթարների կանխատեսում, դրանց առաջացման նախադրյալների վերլուծություն և հնարավոր հետևանքների գնահատում առողջապահության տեսանկյունից:
2. Արտակարգ իրավիճակներում բնակչության բուժսպասարկումն իրականացնելու նպատակով քաղաքացիական պաշտպանության հանրապետական բժշկական ծառայության աշխատանքների պլանավորում:
3. Բնածին և տեխնածին տարբեր աղետների հետևանքով ստեղծված արտակարգ իրավիճակներում բնակչության բուժսպասարկման լիակատար ապահովման նպատակով համապատասխան նախապատրաստական միջոցառումների մշակում՝
  - ա) Հայկական ատոմային էլեկտրակայանի և ճառագայթային վթարի դեպքում բնակչության բժշկական ապահովման առաջնահերթ միջոցառումների կազմակերպում,
  - բ) երկրաշարժի հետևանքով ստեղծված արտակարգ իրավիճակներում բնակչության բուժսպասարկման ապահովման միջոցառումների պլանավորում:
4. Այլ աղետների (սողանքներ, հեղեղումներ, փլուզումներ) սպառնալիքի կամ դրանց առաջացման դեպքում բնակչության բուժսպասարկման լիակատար ապահովման նպատակով խաղաղ պայմաններում աղետային բժշկության մասնագիտացված խմբերի, բժշկական կազմավորումների ստեղծում՝
  - ա) անհետաձգելի բուժօգնության մասնագիտացված բրիգադներ (ԱԲՄԲ),
  - բ) անհետաձգելի նախաբժշկական օգնության բրիգադներ (ԱՆԲՕԲ),
  - գ) շտապ բուժօգնության բրիգադներ (ՇԲՕԲ):
5. Վերապատրաստման դասընթացների, սեմինար պարապմունքների և պլանային ուսումնական վարժանքների միջոցով՝ արտակարգ իրավիճակներում գործող բժշկական կազմավորումների մասնագիտական պատրաստականության հետևողական բարձրացում:
6. Աղետային բժշկության կազմակերպման գործում համաշխարհային փորձի ուսումնասիրում և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցում:
7. Սանիտարահակահամաճարակային ջրկատների ստեղծում աղետի գոտում սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային աշխատանքներ կատարելու համար:
8. Հնարավոր աղետների դեպքում առողջապահական համակարգին անհրաժեշտ դեղերի, դոնորական արյան, դրա պատրաստուկների,

բժշկական սարքավորումների, պատվաստանյութերի, մանրէաբանական և  
ախտորոշիչ պատրաստուկների, բժշկական գույքի և այլ անհրաժեշտ  
միջոցների նախնական հաշվարկ և կուտակում՝ Հայաստանի  
Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության  
աշխատակազմի պետական ռեզերվների գործակալության միջոցով: